

5.21. Համերգային գործունեությունը 2006 թվականին

2006թ. հանրապետությունում գործել են 21 համերգային կազմակերպություններ: Կազմակերպվել է 554 համերգ, որից 348-ը՝ կոլեկտիվների ուժերով, 206-ը՝ այլ կոլեկտիվների հետ համատեղ (պայմանագրային հիմունքներով): Հանրապետությունում կայացած համերգներից 6-ը (1.1%) կազմակերպվել են գյուղական համայնքներում, 168-ը (30.3%)՝ ֆիլիարմոնիկ համերգներն են:

Համերգային կազմակերպությունների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի և ըստ ենթակայության, 2006թ.

(միավոր)

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ ենթակայության		
		ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության	համայնքների	իրավաբանական անձանց
ք.երևան	19	16	2	1
Շիրակ	2	-	2	-
Ընդամենը ՀՀ	21	16	4	1

Արտասահմանում կազմակերպված 17 համերգ-հյուրախաղերից 5-ն իրականացվել է Եվրոպայում, 8-ը՝ ԱՊՀ երկրներում, 3-ը՝ Թուրքիայում և 1-ը՝ Չինաստանում:

2006թ. կազմակերպվել է 287 բարեգործական համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 32.4 հազ. մարդ: Պատվերներով կազմակերպվել է 18 համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 67.7 հազ. մարդ:

Համերգային դահլիճներում կազմակերպված համերգներին ներկա է եղել 204.4 հազ. հանդիսատես: Նրանց 1.2%-ը կան 2.5 հազ. մարդ հաճախել են գյուղական համայնքներում կազմակերպված համերգներին, 48.9%-ը կան 100.0 հազ. մարդ՝ ֆիլիարմոնիկ համերգներին: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 63:

Համերգներից ստացված հասույթը կազմել է 53.2 մլն. դրամ, որից 16.0 մլն. դրամը ստացվել է ֆիլիարմոնիկ համերգներից, իսկ 0.1 մլն. դրամը՝ գյուղական համայնքներում կազմակերպված համերգներից: Միջին հաշվով մեկ համերգի մուտքի վճարումներից հասույթը կազմել է 96.0 հազ. դրամ, ընդ որում, գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 16.7 հազ. դրամ:

Համերգային կազմակերպությունների գործունեությունն ըստ ՀՀ մարզերի, 2006թ.

	Համերգային կազմակերպությունների քանակը, միավոր	Համերգների քանակը, միավոր	Համերգների քանակը մեկ կազմակերպության հաշվով, միավոր	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.երևան	19	527	28	193.4	367.0	52697.7	100.0
Շիրակ	2	27	14	11.0	407.4	500.0	18.5
Ընդամենը ՀՀ	21	554	26	204.4	369.0	53197.7	96.0

2006թ. համերգային կազմակերպությունների ֆինանսական ընդհանուր մուտքերը կազմել են 3087.2 մլն. դրամ, ֆինանսական ընդհանուր ծախսերը՝ 3068.0 մլն. դրամ: Միջին հաշվով մեկ համերգի ֆինանսական ծախսերը կազմել են 5537.9 հազ. դրամ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ֆինանսական միջոցների մուտքն ու օգտագործումը, 2006թ.

(մլն. դրամ)

	Ընդամենը
Ֆինանսական միջոցների մուտքեր	3087.2
այդ թվում՝	
ՀՀ բյուջեից (պետական, համայնքային)	445.0
բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից	53.2
նվիրատվություններից	2455.4
վարձակալությունից	104.5
այլ	29.1
Ֆինանսական ծախսեր	3068.0
այդ թվում՝	
նյութական ծախսեր	132.8
ոչ նյութական ծառայությունների վճարումներ	45.8
գործուղման ծախսեր	25.8
աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	428.3
պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ	118.8
հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր	163.0
այլ	2153.5